

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ՆԵՐԿԱՅ 1889 ԹԻՒՆ

„ՄՇԱԿ“ ԴՐԱԿԱՆՆԵՐՆԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱՆԵՐ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոդրամայով: Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, կից ամսական 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՐԱԳՐԱՐԱՆՈՒԹՅԱՆ (Խարոստակայա և Բաղրանայա փողոցների անկիւնում Թամարիայի տանը):
Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԻՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կասպեան—Սև-ծովեան նաւթանցքը. Միտիստի մշակութիւնը. Ներքին լուրերը.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ թիւրքաց չայատանից. Արտաքին լուրեր.—ԽԱՆՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՑԱՅՏԱՐԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մատենադրութիւն.

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՍՊԵԱՆ-ՍԵՎ-ՍՈՎԱՆ ՆԱԻԲԱՆՑՔԸ

Նոր 1889 թվականի հետ մեր կողմից նաւթային գործերը մտնելու են իրանց զարգացման նոր շրջանը: Յունվարի 15-ին լրանում է այն ժամանակամիջոցը, երբ կառավարութիւնը պահանջելու է կասպեան-սև-ծովեան նաւթանցքը ձեռնարկող մասնաւոր անձից երեք տարվայ ընթացքում սկսել և վերջացնել ամբողջապէս նաւթանցքի կառուցումը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՄՈՒՐՃ» քաղաքական, հասարակական, գրական ամսագիր. № 1—1889 թ. (առաջին տարի).—Խմբագիր-հրատարակիչ Աւետիք Արսլանեանց:

Ռուսահայոց մամուլը հարստացաւ այս տարի մի նոր հրատարակութեամբ:

Պարզ է որ նրանք, որոնք անկեղծ կերպով համակրում են մեր մամուլի ծաղկման ու առաջադիմութեան, պէտք է ուրախանան որ մեր մամուլը հարստացաւ մի նոր հրատարակութեամբ, պէտք է ուրախութեամբ բարենն նոր ամսագրի գրական ասպարիզի վրա հանդէս դալը:

«Մուրճ» արտաքին տեսքը լաւ է, վաշխու է և առաջին համարի բովանդակութիւնը բազմակողմանի է Տեղաւոր բաղադրանք է 196 երեսից:

«Մուրճը» տպվում է Մ. Ռօստինեանցի տպարանում:

Նրբոր մամուլի եղած շրջանում աւելանում է մի նոր ընկերակից.—մամուլի Խրաքանչիւր օրգանի պարտաւորութիւնն է հաշու տալ իր ընթերցողներին նոր լոյս տեսած օրգանի մասին, ծանօթացնել ընթերցողներին եթէ ոչ նրա ամբողջ բովանդակութեան հետ, դո՛ւք առաջին հետ, որոնք հրատարակութեան է աւելանում մասն կազմում, որոնք կարող են համարվել նոր հրատարակութեան ուղղութեան, պրոգրամայի, իրերի վրա նրա որոշ տեսակետի, նրա համոզմունքի դաւանանքի արտայայտութիւնը:

Որքան յայտնի է, դեռ ևս նաւթ պարունակող շերտերի կանոնաւոր հետազոտութիւնները վերաբերում են գլխաւորապէս Ապշեոնեան թերակղզու սահմաններին, թէպէտ նաւթ գտնվում է Կուբանի, Տէրէկի և միւս նահանգներում: Բագ-ժի շրջակայքում հաւաքված է նաւթի այնպիսի հարստութիւն, որի նմանը չը կայ ամբողջ երկ-հարստութիւն, որի նմանը չը կայ ամբողջ երկ-րազնդի վրա: Այդ հարստութեան մասին ընդհանուր դադարի կազմելու համար բաւական է ասել, որ յիշած թերակղզու վրա, չորս քառակուսի հրապարակի մէջ կենտրոնացած են 200-ից ոչ պակաս նաւթային հորեր, որոնք օրական տալիս են կէս միլիոնից աւել պուդ նաւթ, իսկ հուշակաւոր Ամերիկայի 24,000 հորերը, 8,000 քառակուսի տարածութիւնով օրական հազիւ հայրայ-թում են այդքան:

Բագուի նաւթային գործերը իրանց զարգացման ամենաբազմապատկառ զարկը ստացան 1872 թ., երբ վերջ տրվեց նաւթային աղբիւրի մենավաճառութեանը: Այդ այն ժամանակն էր, երբ Ռուսաստանի բոլոր ներքին շուկաները լցված էին

Այդ է պատճառը, որ ներկայ բանասիրական-նում մենք մեր քննութեան առարկայ կը դարձնենք միմյան տեսակի այն յօդուածը, որը, ըստ երեւոյթի, և կազմում է «Մուրճ» ամսականի մասը, որից կարելի է ծանօթանալ նոր խմբագրութեան, կամ իրան խմբագրի հայեացքին եւ ինչպէս թէ մեր մամուլի նորագոյն պատմութեան վրա, թէ նրա անցեալի վրա և թէ այն հասարակական դիրքի վրա, որ նոր ամսագիրը կամենում է առաջին րօսից արդէն դրաւել

«Մուրճ» առաջին տեսակի յօդուածները մասին մենք այստեղ չենք կամենում խօսել նախ այն պատճառով, որ մեր ներկայ յօդուածը շատ կերկարանաւոր, երկրորդ՝ որ այդ բոլոր յօդուածները, մեր կարծիքով, չեն կազմում մի էական մաս նոր ամսագրի առաջին տեսակի մէջ (մի համոզմունք, որ մենք կաշխատենք ապացուցանել) և վերջապէս այն պատճառով, որ վերոյիշեալ յօդուածները մեծ մասը չեն էլ աւարտված «Մուրճ» առաջին տեսակով:

Անցնենք, ուրեմն, անմիջապէս այն յօդուածին, որը կրում է իրան խմբագրի, Աւետիք Արսլանեանցի, ստորագրութիւնը en toutes lettres և որը հանդիսանում է նոր ամսագրի ուղղութեան ղեկավարող բնաւորութիւն ունեցող յօդուած, նրա հայեացքների արտայայտիչ՝ մեր մամուլի անցեալի, նրա ներկայի և «Մուրճ» վերանորոգիչ կողման վրա:

Նախ քան սկսենք խօսել «Մուրճ» ամսագրի, որպէս հատարակական օրգանի վերնագրով Արսլանեանցի առաջնորդող յօդուածի վրա, պէտք է մի նկատողութիւն անենք: Մենք ամենակից զիտաւորութիւն չունենք բանական սկսել Աւետիք Արսլանեանցի օրգանի հետ, այլ պար-

Ամերիկայի կերթնում: Փոքր աւ փոքր մրցելով Ամերիկայի ապրանքի հետ, մեր կերթնը, ակցի-զի ճնշումից ևս ազատվելու պէս, 1886 թ., մի-անգամայն յաղթեց նրան և այժմ Ամերիկայի ապրանք Ռուսաստանում չէ ճարվում, իսկ մեր կերթնը արտահանվում է Եւրոպա տարեկան 7 միլիոն պուդից աւելի:

Սակայն ոչ հում նիւթի այդպիսի հարստութիւնը, ոչ էլ գործի արագ զարգացումը չը նմանեցրին անգամ մեր արդիւնաբերական ճարտարութիւնը Ամերիկայի դրութեան և թոյլ չեն տալի մեզ եզրակացնել, թէ մեր նաւթային գործերը կանոնաւոր ուղղութիւն են ստացել:

Այն միջոցները և ձևերը, որոնք գործ են ածվում Բագուում այդ բնական բերքը հայրայնելու համար, պէտք է համարվեն կատարելապէս յա-փշտակիչ: Որքան որ սկզբում, գործի նորութեան պատճառով, բնական էր յափշտակվել Ամերիկայի օրինակով և ցանկանալ պատրաստելու մեր նաւթիցն էլ նոյն արդիւնքը, ինչ որ ամերիկացիք ստանում են իրանց նաւթից, նոյնքան ան-ներելի է այժմ այդ մոլորութիւնից յետ չը քաշվել: Վաղուց արդէն գիտնական և տեխնիկական հետազոտութիւններով հաստատված է, որ մեր նաւթի բոլոր տեսակները իրանց քիմիական բա-զադրութիւններով էապէս տարբերվում են Ամերիկայի նաւթից: Այս վերջինը, պարունակելով իր մէջ գլխաւորապէս թեթիւ հանքային իւղեր, տալիս է 75% լուսաւորելու և ուրիշ հարկաւորութիւնների նիւթ, մինչդեռ մեր նաւթը այդ տեսակ թեթիւ իւղ պարունակում է միայն 20—25%: Ուստի մեր գործարանները ստիպված թող-նում են 75—80% մնացորդները անմշակ, ար-ժէքից համարեա զուրկ (պուդը 1/2 կօպէկից շատ ցածր), որոնց շատ անգամ աւելի ձեռտու են համարում այդի կամ ծովը լցնել: Բայց գիտնա-կան փաստերը ապացուցանում են, որ մեր նաւթը էլ կարող է տալ 75% պիտանի և աւելի թան-կաղին նիւթ, եթէ մենք յարմարվենք նրա բնական յատկութիւններին և դիմենք նրա գլխաւոր մասին

տաւորութիւն ենք համարում անինայ ըննադա-տել նրա առաջնորդող յօդուածի մէջ յայտնա-ծածը: Ոչ թէ իրան Արսլանեանցին մի բան հրապարակելու, այս կամ այն միտք բացատրելու նպատակով.—մի աշխատանք որը և աւելորդ և ապարդիւն ենք համարում,—այլ յիշեալ առաջ-նորդողի ընթերցանութիւնից դուրս բերած մեր տպաւորութիւնները «Մշակ» ընթերցողներին հաղորդելու նպատակով:

Ուրեմն դիմենք մեզ հետաքրքրող տարակա-լու համար...:

Ինչպէս յայտնի է, քաղաքակրթիւր երկիրներում հրատարակվում են բազմաթիւ լրագրներ և ամ-սագիրներ: Բայց այնու ամենայնիւ մի նոր պար-բերական հրատարակութիւն լոյս տեսնելով և ջանալով գրաւել մամուլի ընտանիքում իր պատ-շաճաւոր դիրքը, վերին աստիճանի անտեղի, ա-նարդար և նոյն իսկ անվայել կը համարելը ըս-կան իր գործունէութեան առաջին քայլերը մօտա-ւորապէս հետեւեալ յայտնութեամբ. «մինչև մեր երկրը մեր հայրենիքին մօտաւոր թաւր մի գործը էին մնում, քանի որ ստիպված լինելով իրանց հետ սրահեղ եղած հրատարակութիւնն-րից, որոնք բոլորն էլ ուսուցաւ են, հասած են մօտաւոր անանկութեան, նրանք անկարող եղան իրանց հերոսական ջանքերով փրկել այդ անշարժ հրատարակութիւնները նրանց վերջնական անկու-թեանը: Բայց ահա դաւիս ենք մենք, ոչ թէ որպէս անկուշ հիւր, այլ որպէս կոչված մտաւոր գործիչ, որին բոլորը սպասում էին, որը ծնունդ է հասարակութեան պահանջներին, որը մի օր դա-նակաւ երևոյթ է, որը ոչ թէ է պղծութիւն է հասա-րակութեան շնչին, այլ որին ինքն հասարակու-թիւնը իր վրի վրա է առնում... Այսօր հան-դէս է գալիս ոչ թէ մի հասարակ հրատարա-կութիւն, այլ մի հրատարակութիւն, որն ունի

—ծանր լուրերին, որոնք նոյն լուսատու արժանա-ւորութիւնները ունեն, նոյն լամպաներում կարող են այրվել և մի և նոյն ժամանակ աւելի փոքր երկիւղ են ներկայացնում հրդեհներից:

Բագուի նաւթային գործունէութեան յատուկ միւս շնաստակար պայմանները տիրապետում են բնական անպատրաստ նիւթի հետ ան-հոգաբար վարվելու մէջ: Ներկայումս Բագուում այն նաւթային հորերը, որոնք օրական 1,000 պուդից պակաս են հայրայնում, մնում են ա-ռանց ուղարկութեան. աւելի խոր հորեր են փո-րում տաննակ հազարներ պուդ ստանալու նը-պատակով, իսկ ամենից շատ աշխատանք և ջըը-տինք թափվում է նաւթային շատրուաններին հաս-նելու համար: Չունենալով ստացած նաւթի քանա-կութեան համապատասխան հաւաքելու և պահե-լու կանոնաւոր միջոցներ, նաւթ հայրայնողները իրանց բաղաւոր են համարում, եթէ կարողա-նում են ծախել այն էլ, ինչ որ չորս կողմը թափվելուց ու գետնը ծծվելուց յետոյ նրանց ձեռքն է ընկնում: Այդպիսի պայմաններում երբ շատրուաններ են բացվում, բացի նրանից, որ միւս աղբիւրների գործունէութիւնը ճարահա-տեալ դադարում է և սրանց տեղերը կրում են մեծ վնասներ, շատրուանի տիրոջ համար էլ հնար է լինում օգտվել նաւթի միայն այն մասից, որը նրա պահանջներում և գետնի մէջ փորած փո-սերի մէջ է հաւաքվում: Բայց եթէ մտաբերենք, որ շատրուանները ըստ մեծի մասին դուրս են ձգում օրական կէս միլիոն, երբեմն 800,000 պ. նաւթ, այն ժամանակ հասկանալի կը լինի, թէ որքան է կորուստ այդ բերքի սարսափելի քանա-կութիւնից: Այս անկարգ դրութեան պատճառը գլխաւորապէս՝ նաւթի և իր արդաւորների ար-տահանութեան միջոցների պակասութիւնն է: Տա-րեկան Բագուում ստացվում է 160 միլիոն պ. նաւթ, որից թողվում է 50 միլիոն պ. կերթին: Այդ կերթինն արտահանութեան ճանապարհներն են Անդրկովկասեան երկաթուղին, որ 20 միլիոն պուդից աւել ընդունակ չէ վերցնելու և Վոլգա

որպէս ղեկավար մի որոշ անձնաւորութիւն: Մեղանից առաջ կային ընդունակներ, կային նոյն իսկ տաղանդաւոր մարդիկ, խոր գի-տութիւն, բազմակողմանի ուսում ունեցող մար-դիկ.—բայց նրանք մի քանի տարվայ ընթաց-քում հասան մտաւոր կատարեալ անանկութեան, որովհետեւ չունէին ոչ ժողովրդի պահանջները ըմբռնելու յատկութիւնը, ոչ էլ այն խոր խելքը և բազմակողմանի ուսումը, (որը մենք ունենք) և որը անհրաժեշտ է ժողովրդը ղեկ աւելա-րու համար...:

Եթէ կրթված Եւրոպայում մի նոր հրատարա-կութիւն հանդէս դար այդ տեսակ ափերիստա-կան յայտարարութեամբ,—անկասկած բոլոր խե-լացի և զգույն մարդիկ կամ կը ծաղրէին այդ տե-սակ խօսողին, կամ կը քաշվէին նրանից: Կամ կը ծաղրէին, ասում ենք, համարելով այդ տեսակ յայտարարութիւն մի տեղի, անվայել, անտաշ, կոշտ ու կոպիտ ափերիստական ընկալած, անշարժ աչքակապութիւն... կամ կը քաշվէին այդ տեսակ խօսողից, համարելով նրան «mania grandiosa» յայտնի հոգեկան հիւանդութեան ենթարկված մի անձնաւորութիւն:

Եւրոպայում դա անհնարին կը լինէր և անհա-րկն էլ կը լինէր Եւրոպական լեզուով թարգմանել վերոյիշեալի պէս մի ամագրական կամ լրագրա-կան յայտարարութիւն:

Բայց ասիական հասարակութեան մէջ դա հը-նարաւոր է: Դա չէ վերաւորում ոչ որք նուրբ զգացմունքները: Արեւելք տպրւ է մարդար է-ն երի, ուրեմն արեւելեան մի ազգի մէջ շատ բը-նական է համարվում հրապարակի վրա կանգնել և աղաղակել. «չուք սպասում էիք մեւսիա-յին»,—ուրախացէք, նա եկաւ... այդ մտնան

Ընթերցողը գուցէ կարծում է որ մենք չափա-

գետը, որը նոյնպէս հազիւ 20 միլիոն պ. է կը-
րում, ուրեմն մօտ 10 միլիոնի չափ տարեկան
մնում է տեղում:

Բազմակողմանի գիտնական հետազոտութիւն-
ները համոզեցին վերջապէս կառավարութեանը
մի նոր զարկ տալ նաւթային գործերին, որոնք
ունեն ոչ թէ անձնական կամ գաւառական նը-
շանակութիւն, այլ և պետական, և հասցնել
նրանց վայել բարձրութեան: Այդ նոր զարկը
կասպեան-Վսեթիկան նաւթանցքի կառուցումն է,
որը կառավարութիւնը թող է տուել մի մասնա-
ւոր ձեռնարկով: Այդ բարդ և թանկագին ձեռ-
նարկութիւնը, որը իր երկարութեամբ համա-
րեա առաջինն է լինելու աշխարհում, սպասու-
իլքները և յայտնի հետեւեալն են:

Նաւթանցքը, ներկայացնելով ամենանշուա և է-
փան տեղադրութեան միջոց, Բագուից դէպի
Սև ծովը բերելու է տարեկան ամենաբարձր 40
միլիոն պուտ նաւթ, իսկ պահանջը աւելանալուն
համեմատ նա կը կարողանայ բերել 60 միլիոն
պ. և աւել: Այդպիսի մեծ քանակութեան
արտադրութիւնը անկասկած կը բարձրացնէ Բագ-
ուում նաւթի գինը և կը կանոնաւորէ այստեղ նը-
րա արդիւնաբերութիւնը: Դատարարները բաց-
վելը, որը այժմ միշտ երկիւղ է սպառնում վա-
ճառականութեան, այնուհետև կը լինի միմիայն
ցանկալի: Բաթումում և Սև ծովի միւս նաւա-
հանքայիններում առաջ կը գտն նաւթ մշակող
գործարաններ, որոնք անշուշտ կը լինեն այն
սկզբունքներով վրա հիմնված, որոնք աւելի յարմար
կը լինեն մեր նաւթից աւելի թանկագին
արգասիքներ ստանալու, քան ստացվում են այ-
ժմ: Բագուի գործարաններում՝ հակառակ նաւթի
բնական յատկութիւններին՝ Այդ նոր գործարան-
ները կը սկսեն մրցել Բագուի գործարանների
հետ, որոնք ստիպված կը լինեն թողնել այն յա-
վիտակիչ ուղղութիւնը, որից չեղելը նրանց հա-
մար սկսական նախաձեռնութիւններով անհա-
րկն բան է:

Այսպիսով Սև ծովի ափերում նաւթից պատրաս-
տած ապրանքների համար կը բացվի նոր ճանա-
պարհ. դէպի Սև ծով, Մեջերկրականի և Ատլան-
տեան ովկիանոսի շուկաները, որտեղ Ամերիկայի
նաւթային ապրանքները անհամեմատ բարձր գին
ունեն: Մեր լուսաւորող հանրային ծանր իւրի
գինը Սև ծովի ափերում կը լինի իր բոլոր ծախ-
սերով 40 կոպ., զաւրով սրա վրա 20 կ. ծանա-
պարհի ծախս մինչև արևմտեան Եւրոպայի նա-
ւահանգիստները, կարելի կը լինի առաջարկել
մեր ապրանքը 60 կ. պ., այդ դեմով Ամերիկայի
ապրանք կարելի է ծարել միայն Ամերիկայի նա-
ւահանգիստներում, օրինակ Նիւ-Եորկում, ինչ-

զանցնում ենք. թող ուշադրութեամբ կարդայ
«Մուրճի» առաջնորդը և կը համոզվի, որ ան-
շուշտ վտիտութեամբ, ուրիշ բառերով, աւելի
կոկ ասացածներով և, որ զլիաւորն է, աւելի
խճճված նախադասութիւններով արտայայտված
նա կը գտնի նոր ամսագրի մէջ նոյն ինքնահա-
նաւան մտքերը, որ մենք այս րօպէիս փորձե-
ցինք արտայայտել աւելի հասկերճ, աւելի ան-
պաճ ուճ, աւելի հարկը ու պարզ, նոյն իսկ
բն ու թ եւ ն մ եր կ ու թ և ան հասցրած ոճով...

Ինչ կը լինէր եթէ կրթված Եւրոպայում պա-
տահեր հետեւեալը:

Մի լրագիր, ղեկավար Աւստրալիայի «Allgemeine
Zeitung», որը այժմ Միւնխենում է հրատա-
րակվում հազիւ տարի է արդէն որ գոյութիւն
ունի, այնուհետև սկսվում է հրատարակվել Բեր-
լինում «Deutsche Rundschau» ամսագիրը: Ինչ
կասե՞նք զերմանացիք, եթէ այդ վերջին ամսագի-
րը հանդէս դառնաւ տարբերակ յայտարա-
րութեամբ: «Միւնխեն» «Allgemeine Zeitung» լը-
րագիրը ուժապաւ լինելով և նրա խմբագրու-
թիւնը մտաւոր անանկութեանը հասած լինելով,
զերմանական հասարակութեան մէջ մի անհրա-
ժեշտ պահանջ էր զգացվում, որ մի նոր հրատա-
րակութիւն երևար, քանի որ եղածներին անհա-
րկն է այժմ փրկել վերջնական անկումից: Եւ ան-
մենք ձեռնամուկ ենք լինում մի նոր հրատարակու-
թեան, որը զերմանական կենտրոն բովանդակ ոչ
որդան պիտի լինի, մեր երկրի ամբողջ մտաւոր
կենտրոն իր մէջ պիտի ամփոփէ, ուրեմն աւելորդ
պիտի դարձնէ մեզանից առաջ եղած բոլոր գեր-
մանական պարբերական հրատարակութիւնների
գոյութիւնը:

Այդ տեսակ ընկալած ծիծաղելի կը դարձնէր
հասարակութեան աչքում նոր ամսագրի խմբա-

պէս երևում է նրանց պաշտօնական տեղեկու-
թիւնները:

Նաւթանցքը աւելի և աւելի նաւթ պահանջե-
լով կամրացնէ գնները այնքան, որ օգտաւէտ
կը լինի բանեցնել և փոքր հորերը, առաջ կը
գան ընտելութիւններ և հետազոտութիւններ նաւ-
թանցքի շրջականներում գտնված աղբիւրների,
որով հնար կը լինի կենտրոն կոչել մեր երկրի
անուշադիր թողած բնական հարստութեան նշա-
նաւոր մասը: Հետևապէս կը բացվեն քիմիական
գործարաններ Սև ծովի արևելեան ափերում, նը-
րանց համար հարկաւոր տեխնիկական յարմարու-
թիւններով, որոնք բոլորը միասին կը մղեն
մեր ստորերկրայ հարստութիւններով լի երկիրը
դէպի այն կենտրոն, որին նրա ներքին գորու-
թիւնները վաղուց սպասում են:

Ինչպէս և ամեն մի մեծ և նոր ձեռնարկու-
թիւն, նաւթանցքն էլ ունի իր հակառակորդնե-
րը: Սրանք պնդում են, որ Բագուում նաւթի
քանակութիւնը նուազում է տարուց տարի, իսկ
նաւթանցքը կը շտապեցնէ նրա սպառման ժա-
մանակը և որ նոր գործարանները կը դադարեց-
նեն այժմանների գործունէութիւնը:

Ինչ վերաբերում է նաւթի սպառմանը, երևելի
առաւ գիտնական պրօֆեսոր Մէդելէնկի ընտու-
թիւնների վրա հիմնվելով հաստատված է, որ
դեռ շատ շուտ է այդ հարցի մասին դատելը:
Դեռ 1877 թ. Բագու այնքանուց և հողային շեր-
տերի մէջ նաւթ գտնվելու պայմանների հետ
անձամբ ծանօթանալուց յետոյ, Մէդելէնկի առա-
ջարկեց իր հուշակաւոր հիպոթէզան, որը այժմ
արդէն ընդունված է ամբողջ գերմանական աշխար-
հում: Այդ հիպոթէզան բացատրում է, որ նաւթը
ստորերկրայ հրաշէկ մետաղների (երկաթի, պը-
ղնի և այլն) վրա ծովային ջրի ունեցած ներ-
գործութեան արդիւնքն է: Նա բարձրանում է խոր
ծննդատեղից դէպի մակերևութը այն բնական
ճեղքերով, որոնցով նրան դուրսանող ծովային ջուրը
իջնում է ներքև: Բարձրանալիս նա տարածվում
է այդ ճեղքերի մօտ պատահած ծծող շերտերի
մէջ, կամ լցվում է գետնի միջի դատարկ տեղե-
րում, որտեղ մնում է երկար ժամանակ: Նաւ-
թային հորերը և առաւել ևս շարունակները, ո-
րոնց թիւը չէ նուազում Բագուում, սպառնուցա-
նում են, որ նաւթ կըրդ գտնաւորւի բարձրու-
թեան շերտերը դեռ ևս պարունակում են իրանց
մէջ նաւթի ահադին զանդուած և որ ներքին շեր-
տերում (120—150 սաժէն) նաւթի քանակու-
թիւնը այն աստիճան մեծ է, որ համարեա ամեն
նոր հորը սկսվում է շարունակում:

Իսկ հակառակորդների ցոյց տուած երկրորդ
պատճառը նշանակութիւն չէ կարող ունենալ,

զոր ինքնահաւանութիւնը: Եւ դա բաւական չէ,
այդ տեսակ յայտնութիւնը կասկած կը ծննդնէր
հասարակութեան մէջ խմբագրի մտաւոր կարո-
ղութիւնների առողջ լինելու մասին: Երբեք
մէջ կամ դա կը համարվէր տեղի, անշուրհ, կո-
պիտ րէ կլլւմ, կամ դա կը համարվէր իսկ լա-
ցն ու թ իւն, կամ վերջապէս կատարեալ տը-
գիտութիւն:

Եւ ճշմարիտ, ով կը փոտահանայ, եթէ ոչ կա-
տարեալ տեղեւ, մտածելու անպատրաստ, դրա-
կանութեան ու մարդկային ժառանգ գարգացման
պատմութեան հետ կատարելագոյն անձնօթ
մարդ պնդել թէ, երբ մի հասարակութեան մէջ
մի նոր հրատարակութիւն է յայտնվում, մնա-
ցածները անմիջապէս պէտք է ի ջնհն ասպա-
րի զից: Այդպիսով մարդկային մտաւոր զար-
գացման գործը միշտ անշարժ կը մնար, երբեք
միաժամանակ գոյութիւն չէին ունենայ մի և
նոյն հասարակութեան մէջ մի քանի լրագիրներ
և ամսագիրներ, այլ հէնց որ մի նոր հրատարա-
կութիւն հանդէս գար, բոլոր մնացածները անմի-
ջապէս պէտք է իջնէին ասպարիցից: Եւ ինչ կապ
կայ մի ամսագրի ու մի լրագրի մէջ. ինչ հարկա-
ւոր է, որ ամսագիրը անպատճառ մրցութիւն անէր
արդէն եղած լրագրին և իր գոյութիւնը հաստա-
տելու համար անպատճառ յայտնէր, որ իր ծըն-
վելու օրից իրանից առաջ գոյութիւն ունեցած
լրագիրը անպատճառ պիտի օչնչանայ: Ինչ հար-
կաւոր է, որ ամսագիրը անպատճառ յայտնէր,
թէ այսուհետև ինքն մինչև բռնելու է բոլոր ե-
ղած լրագիրների կամ ամսագիրների տեղը: Մի-
թէ մի նոր օրգանին գոյութիւն ունենալու համար
հարկաւոր է խմբակի ձայնով, հազիւն աղմու-
կով յայտարարել որ իրանից առաջ եղած հրա-
տարակութիւնները բոլորն էլ ուժապաւ են,
բոլորն էլ այն աստիճան ընկած են, որ այլ ևս

քանի որ նա առաջ է դալիս միայն Բագուի մի
քանի գործարանների հացի խնդրից:

Այսպիսով նոր տարվայ հետ ցանկանում ենք
մեր երկրին ազատ, լայն և կանոնաւոր դարգա-
ցում այս ձեռնարկութեան մէջ. թող նաւթանցքը
լինի այն ոյժը, որը առաջ է քաշում տեխնիկական
ասպարիզում թարմ ընդունակութիւններով, ձիւ-
քով, հեղինակութիւնով օժտված անձեր, որը հիմ-
նում է մրցութիւն աւելի ընտիր նիւթ պատրաստե-
լու.—այն ժամանակ հաղաբաւոր անձինք կունե-
նան առաւել ապահով աշխատանքի ու ապրուս-
տի միջոց, քան թէ այն, որ նրանք ունեն հա-
ղաբաւոր տարիներից ի վեր թմրած և հնացած
առեւտրական ձեւերով:

Պետերբուրգ. Գր. Տգր.

ՄԻՍԽԻՄՈՒՄԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ

Միախոտի մշակութեան գործը մեր երկրում
վերջին տարիների ընթացքում մի տեսակ ճշնա-
թամի է ենթարկված. մի կողմից լաւ տեսակի
ծխախոտի գինը շատ բարձրացել է, իսկ միւս
կողմից ծխախոտի արդիւնաբերութիւնը ոչ զգալի
կերպով մեծանում, և ոչ էլ արդիւնաբերութեան
տեսակները լաւանում են:

Յայտնի է, որ արտասահմանից, զլիաւորապէս
Թիւրքիայից, ծխախոտի ներմուծման առաջին առ-
նելու համար շատ բարձր մաքսահարկեր են դըր-
ված, որոնք համարեա կատարելապէս դուրս են
քշել մեր երկրի վաճառատներից թիւրքաց ծխա-
խոտը, որը յայտնի է իր շատ լաւ յատկութիւն-
ներով:

Աւելորդ էլ է բացատրել, որ մաքսահարկերի
շատացնելու, կամ ծխախոտի արդիւնաբերութիւ-
նը հ ո վ ա ն ա ո ռ ո ղ ս ի ո ս տ և մ ա յ ի ենթարկե-
լու նպատակն էր զարգացնել երկրի ներսում
ծխախոտի արդիւնաբերութիւնը, և այդպիսով
նպատակն աղգաբնական տնտեսական շահե-
րին զէնէլ այն տեղերում, ուր ծխախոտի մշա-
կութիւնը շատ զարգացել է, ինչպէս, օրինակ,
կովկասում, Ղրիմում և ընդհանրապէս հարաւա-
յին Ռուսաստանում:

Բայց, ինչպէս ցոյց են տալիս նոյն իսկ պաշ-
տօնական տեղեկութիւնները, այդ բանից տեղա-
կան արդիւնաբերութիւնը շատ էլ օգուտ չը
ստացաւ, և բայց զբանից տեղական աղգաբնա-
կութեան մասնակցութիւնը ծխախոտի արդիւնա-
բերութեան մէջ համարեա թէ չաւելացաւ:

Լաւ տեսակի, կամ ինչպէս սովորաբար ասում
են, թիւրքաց տեսակի ծխախոտի գինը այժմ
անհամեմատ բարձր է, քան առաջ: Այդ դեռ
բաւական չէ: Այժմ շատ տեղ անկարելի է ստա-

նալ այն յատկութիւններ ունեցող ծխախոտ, ինչ
յատկութիւն որ ունէր Թիւրքիայից ներմուծող
ծխախոտը, քանի որ մեր երկրի կլիմայական
յատկութիւնների և մեր մշակողների անընդու-
նակութեան պատճառով մեզ մօտ մշակվող
ծխախոտը չունի իր նախատիպի գեղեցիկ յատ-
կութիւնները:

Այս տարվայ սկզբներում նոյն իսկ կովկա-
սեան Գիւղատնտեսական ընկերութեան ժողով-
ներում հարց յարուցվեց մեր երկրի ծխախոտի
արդիւնաբերութիւնը զարգացնելու համար,—բայց
այդ տեսակ հարցերը, ի հարկէ, դեռ երկար ժա-
մանակ հարց են կը մնան: Նոյն ընկերութեան
ժողովներում յայտնվեց և այն կարծիքը, որ մեր
երկրում ծխախոտի մշակութեան գործը փոքր առ
փոքր անցնում է թիւրքահայաւատակների ձեռքը,
որովհետև տեղացիները հմուտ չեն այդ գործում,
և եթէ պլանտացիաների տէրերը կամենում են
լաւ ծխախոտ ստանալ, կամայ ակամայ ստիպ-
ված են լինում բերել տալ Թիւրքիայից վարպեա-
ներ և բազմաթիւ բանուորներ...

Եւ նոյն իսկ այդ օտարահայաւատակների ձեռքով
մշակվող ծխախոտը չունի թիւրքաց ծխախոտի
լաւ յատկութիւնները, բայց այնու ամենայնիւ
այդ համեմատաբար աւելի վատ ծխախոտը աւե-
լի թանկ է նստում գործածողներին, աւելի
թանկ է ծախվում, քանակութեան կողմից էլ
չէ մեծանում, և հէնց այժմ էլ Ռուսաստանի
սահմաններում մշակվող ծխախոտը վատ, հա-
սարակ տեսակիցն է, որի դէմ, ի հարկէ, թիւր-
քաց ծխախոտը հարկաւորութիւն էլ չունի երբեք
մրցումն անելու... Նախ քան մեր յօդուածի վեր-
ջացնելը աւելորդ չենք համարում հաղորդել մի
քանի տեղեկութիւններ ծխախոտի մշակութեան
քանակութեան մասին:

1887 թ. վերաբերութեամբ հրատարակված
պաշտօնական տեղեկութիւններից երևում է, որ
Ռուսաստանում կայ ծխախոտի 647,830 պլան-
տացիա. այն հողի տարածութիւնը, որի վրա ծը-
խախոտ է մշակվում, կազմում է 58,707 դեկա-
տին, և այդքան տարածութիւնից ստացվում է
աւելի քան 5 միլիոն պուտ ծխախոտ: Բայց պէտք
է ասել, որ այդքան ծխախոտից 4 միլիոն պուտ
հասարակ տեսակի ծխախոտ է: Լաւ տեսակի ծը-
խախոտը թէև քանակութեան կողմից քիչ է ե-
ղել, բայց աւելի արժէք:

1888 թ. աւանի սկզբի տնտես ամսվայ ընթաց-
քում արտասահմանից ներմուծված է ընդամենը
32,000 պուտ լաւ տեսակի ծխախոտ:

հասկանում, բայց իր նոր օրգանի գոյութեան
անհրաժեշտութիւնը հասարակութեանը ապացու-
ցանելու և այդ օրգանի գոյութիւնը ապահովելու
համար,—նրան հարկաւոր եղաւ. դիմել իս ուրա-
ման կ ու թ եւ ն, դիմել մի անապիւս միջոցի,
որը միայն տեխնիկական հասարակութեան մէջ կա-
րող է անպատճառ անցնել. նա սկսում է յեղաշը-
նել ճշմարտութիւնը, աղաւաղել իրողութիւնները,
կեղծել պատմական փաստեր...

Նա շատ լաւ գիտէ, որ մի ամսագիր, ինչ լե-
զուով և ինչ հասարակութեան մէջ էլ հրատա-
րակվէր նա, երբեք իր գոյութեամբ չէ կարող
մրցել մի լրագրի հետ: Բայց ինչպէս անի նա,
որպէս զի ապահովացնէ իր ամսագրի գոյութիւ-
նը, բացառել հասարակութեան այդ ամսագրի
գոյութեան անհրաժեշտութիւնը, մասնաւոր հա-
նի այն քաղցր տենչանքին, որ «Մուրճը» բոլոր-
ովին մենակ տիրապետէ առասպալայոց գրական
ամբողջ ասպարէզին...

Դրա համար կայ հետեւեալ միջոցը. կեղծել
պատմութիւնը, տակն ու վրա անել մեր գրա-
կան նորագոյն պատմութեան ժամանակագրու-
թիւնը, յեղաշընել փաստերը և վայր զցնել նա-
խորդներին հեղինակութիւնը, ջանալ ապացուցա-
նել, որ նախորդները գործին անպատրաստ լինե-
լով չը կարողացան իրանց սկսած գործը երկար
տարիներով առաջ տանել, անընդունակ եղան ժո-
ղովրդի պահանջները ըմբռնել,—և իրանց բռնած
գրօշակը շատ շուտով ընկաւ իրանց թուլացած
ձեռքից... Ուրեմն, եթէ բոլոր նախորդները մի-
միայն գործի սկսողներ էին, և ոչ մին նրանցից
ընդունակ չեղաւ նոյն գործի շարունակող լինել,
պարզ է, որ միակ արժանաւոր, ընդունակ, կոչ-
ված շարունակողը—պէտք է լինի Աւետիք Ա-
րամեանեանց...

(Կը շարունակվի)

ՆՆՈՒՄՆԻ ԼՈՐԻՆԻ

«ՀԱՅԵԱՅԷ» լրագիրը հաղորդում է որ յոժնվարի 10-ին, ժամը 2-ին կէսօրից յետոյ, կովկասեան կառավարչապետ, իշխան Գոնդուկով-Կորսակով ուղևորվեց կովկասեան սարերի ճանապարհով դէպի Ս. Պետերբուրգ:

«Гражданинъ» լրագիրը հաղորդում է որ այս ամսի 3-րդ կը դրվի երեք մեծ նաւերի կառուցման:

Այս րօպէիս հեռագիր ստացանք Մարտիկի որ զօրապետ կոմս Լօրիս-Մէլիքովի մարմինը յունվարի 10-ին «Մինգրէլի» չորհրդակալ վրա դրվեց և մեկնեցաւ ծովով դէպի Անդրկովկաս Մարտիկի հայ գաղթականութիւնը ներկայ էր հանդիսին, և մի պահակ դրեց հանգուցեալի դագաղի վրա:

«Հիւսիսային» հեռագրական գործակալութիւնը հեռագրում է մեզ յոժնվարի 6-ից որ Պետերբուրգի բօրային մասնաժողովը վերջնականապէս որոշեց՝ յունվարի 16-ից, երկուշաբթի օրից սկսած՝ բանալ բօրային ժողովները առաւօտեան 11 1/2 ժամից մինչև 12 1/2 ժամ իսկ Մօսկվայի Բօրայում, յունվարի 16-ից սկսած ժողովները լինելու են 12 ժամից սկսած մինչև 1 ժամ կէսօրից յետոյ: Ապրանքատերերի համար ժողովները առաջվայ պէս նշանակված են երկուշաբթի 4 ժամից մինչև 5 ժամ: Կուրսային օրերը որոշված են՝ երեքշաբթի և ուրբաթ օրեր:

«Гражданинъ» լրագիրը հաղորդում է, որ հաղորդակցութեան ճանապարհների միջոցովը առաջիկայ դարձան զինուորական ուժի գաւառներում ճանապարհորդելու՝ թէ երկաթուղիների և թէ առհասարակ ճանապարհների դրութեան հետ անձամբ ծանօթանալու համար:

«Հիւսիսային» հեռագրական գործակալութիւնը հաղորդում է, որ վելիսների (փոխանակադրերի) վերաբերեալ նոր կանոնադրութիւնը ներկայացրած է արդէն պետական խորհրդին:

Ինչպէս հեռագրում է «Հիւսիսային» գործակալութիւնը, նախագահների առաջարկութեամբ վճարված է նորից թղթատել ժողովրդական տարրական դպրոցների ուսուցիչներին կազմել ուսուցչական նախագահական ժողովներ:

Պետական կառավարչի միջնորդութիւնը միջնորդութիւն ունի հիմնել նախ Պետերբուրգում և ապա նախագահական քաղաքներում մշտական մասնաժողովներ՝ միջնորդութիւնի պիտանութեան վերաբերեալ կառավարչութիւնն ունենալու նպատակով:

Կ. Պօլսից ստացված տեղեկութիւններից երեւում է, որ զեկտեմբերի 30-ին, ուրբաթ օր, Կ. Պօլսում կատարվել է այ. Արամեանի բնական գործունէութեան քանակագրութեան Բօրեկեանի տնտեսութեան օրը, Թատրօնի մէջ խոսված քաղաքային հասարակութիւնը ողորդված ցոյցեր է արել տաղանդաւոր արտիստին թէ ներկայացուցից և թէ նուիրատուութիւններից յօգուտ յօբեկեարի դոյացել է մօտ 500 օսմ. ոսկի գումար: Ներկայացման վերջում այ. Արամեան դիմել է խնդրականներին մի ողորդված ատենադասութեամբ՝ ջերմ շնորհակալութիւն յայտնելով այն համակրանքի համար, որով հասարակութիւնը վերաբերվում է՝ դէպի հայ թատիքը ընդհանրապէս և դէպի իր գործունէութիւնը մասնաւորապէս:

Այսօր հայ դերասանները Առետրական կուրի դաշինքում մի ներկայացում պիտի տան յօգուտ մի թիւրքահայաստանցի կոյր վարժապետի՝ Աթէնանի Թուառ վարժապետին դէթ մի փոքր նըպաստ ցոյց տալու համար՝ անկախած շատերը կը շտապեն այդ երկուշաբթի ներկայացման ներկայ լինելու մասնաւոր հայ վարժապետները և վարժուհիները, որոնց վրա առանձին պարտք կայ օգնելու երեւմն դպրոցական ասպարիզում գործող՝ բայց այժմ կոյր և անօգնական մնացած մարդուն:

Այս օրերս Պետերբուրգում, ինչպէս հաղորդում են այնտեղի լրագիրները, սպասում են Ֆրանսիացի երեսկի հոգեւոր Դաւիթի դալուն:

Ստացանք վերնեցիայում հրատարակվող «Բաղմալէպ» հանդիսի 1888 թվի վերջին տետրակը: Ինչպէս յայտնի է, «Բաղմալէպը» երեք ամիսը մի անգամ է հրատարակվում և կազմում է մի բաժանան հաստ գիրքը: Բայց բովանդակութեան կողմից այնքան աղքատ է, և նիւթերն էլ այնքան միակողմանի, անհետաքրքրական են, որ դժուար թէ այդ հանդէսը կարողանայ արժանանալ հասարակութեան ուշադրութեան: Յանկալի է, որ Միլիթարեան հայերը մի փոքր հարստացնէին և հետաքրքրական դարձնէին այդ երկար տարիներից ի վեր գոյութիւն ունեցող հրատարակութեան բովանդակութիւնը:

Մեզ ուղարկված է «Միտի» հատուածները վերնագրով դասագիրքը, որ յօրինել է պ. Յ. Նաղարեան: Այդ գիրքը նոր գիրք չէ, նա լոյս է տեսնում երկրորդ լրացած տպագրութեամբ, և այդ պատճառով մենք զրա վրա երկար կանգ չենք առնի: Այսպէս միայն կասենք, որ թէ և գաղափարը բաւական հարուստ նիւթ է պարունակում իր մէջ, բաղկացած լինելով աւելի քան 500 երեսից, բայց նիւթերը ընտրութեան մէջ յօրինողը այնքան էլ խիստ չէ եղել: Ի մտքից է իր դասագրքի մէջ շատ այնպիսի յօդուածներ, որոնք դասագրքի համար յարմարութիւն չունեն և չեն կարող ծառայել իրեն նիւթ դպրոցական դաստառութեան համար: Որքան էլ մեր դրականութեան այս կամ այն ճիւղը ընդհանրապէս առած, աղքատ լինել, բայց և այնպէս նա այնքան ստեղծագործութիւններ է պարունակում, որ շատ առատ նիւթ կարող է տալ հայերին լեզուով մի խրատ ու օգուտ տալ ի համար, հարկաւոր է միայն՝ աշխատել, զոել, ընտել և ժողովել այն բոլորը, որ կարող է պիտանի լինել մի լաւ խրատօժատիայի համար: Պ. Նաղարեան, ինչպէս ասացուցանում են նրա հրատարակած դասագրքի գրութիւնի աշխատանքներում ունի, և մնում է միայն, որ նա աւելի մշակէ իր հրատարակած դասագրքերը, և աւելի խիստ ընտրութեան ենթարկէ իր ձեռքի տակ եղած նիւթերը և աւելի որոշ դարձնէ գրքի բաժանմունքները: Եւ այդ ժամանակ, անկասկած, նրա հրատարակած «Միտի» հատուածները գիրքը աւելի գնահատելի կը լինէր, իրեն մի դասագիրքէ մենք չը գիտենք, թէ ինչ կարծիք ունեն մեր մանկավարժները պ. Նաղարեանից այդ դասագրքի մասին, թէպէտ նրա երկրորդ տպագրութեամբ լոյս տեսնելը արդէն ապացոյց է, որ գիրքը տարածվում է, բայց չենք կարող մասնաւոր չանել այն բանի վրա, որ ինքը Նաղարեանը շատ մեծ կարծիք ունի իր դասագրքի մասին, որի համար տուած յայտարարութեան մէջ ինքն ասում է հետեւալը. «Խորհուրդ է տրվում ամեն ընթերցասէր հայի ձեռք բերել այդ վերին աստիճանի հետաքրքրական (!) ու բազմաթիւ հատուածները (21) գիրքը»: Խորհուրդ տալով յօրինողին հեռու պահել իրան այդ տեսակ բնականութիւնը, մենք կը վերջացնենք մեր նկատողութիւնը՝ յիշելով, որ «Միտի» հատուածների արտադրի տեղը շատ վաղեմաւ է, տպագրութիւնը և թուղթը մաքուր, զինն էլ բաւական է ժան, ասին է 1 ր. 25 կոպէկ, իսկ գումարով գնողների համար՝ 1 րուբլի:

Բազում հրատարակվող «Հասի» լրագիրը լսել է, որ այնտեղի հայերի կողմից ներկայացուցիչ պետ է զայ Թիֆլիս Լօրիս-Մէլիքովի թաղմանը ներկայ լինելու և հանդուգեալի դագաղի վրա պահակ դնելու համար: Այդ ներկայացուցիչը պիտի լինի պ. Անտոնեան:

Բժշկական դեպարտամէնտի հրատարակած տեղեկութիւններից երևում է, որ մի տարւայ ընթացքում ամբողջ Ռուսաստանում եղել է 4,900 ինքնապաշտպանական և սպանութեան դէպք:

Կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան զբաղման կարողութիւնը, ինչպէս երեւում է մեզ հասած տեղեկութիւններից, այժմ հասնում է 33,000 րուբլ 63 կոպէկի: Ներկայ 1889 թվի համար նախահաշիւով ընկերութեան մասը սպասվում է 5,183 րուբլի 65 կոպէկի, իսկ ծախս որոշված է նոյնպէս 5,183 րուբլի 65 կոպէկ:

Մեզ հաղորդում են, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձուները մի մասը վճառել է կարգի բերել դպրոցի անտեսական մասը և պարզել դպրոցի

դանձարանի հաշիւները, որոնք վերջին ժամանակներս բաւական խառնված են: Առանց բացատրելու անտեսողիտեան այդ արեւմտեան կարողութիւնը, մենք չենք կարող նորից մատնանել չանել այն բանի վրա, որ անհրաժեշտ է, որ վարչութիւնը գէթ տարին մի անգամ հաշիւ վում էր դպրոցի տարեկան հանդիսի ժամանակ, իսկ այժմ, երբ այդ հանդէսը չէ կատարվում (մեզ անյայտ պատճառներով), կարելի է նոյն հաշուի հետ հասարակութեանը ծանօթացնել տրւապարտեան միջոցով, հրատարակելով դպրոցի հաշիւները առանձին տետրակներով և տարածելով հասարակութեան մէջ:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են, «Բժշկական մի մասնաժողով այցելելով տեղական բաղնիքները՝ անհամապատասխան է գտել նրանց առողջապահական պայմաններին և տուգանքի է ենթարկել տեղերին: Բաղնիքներից ներքե գտնվող թաղեցիներին արգելված է ջուր վերցնել գետից: Այդ պատճառով խեղճ թաղեցիները ստիպված են կամ ձիւնը հալել, կամ 8—10 կոպէկ վճարել երկու վերջ ջրի համար, որ խեղճերի համար կատարելապէս անմատչելի է: Եթէ այժմ, ձմեռ ժամանակ, ջուրը վնասակար է համարվում, բնականաբար գարնանը՝ երբ գետի մէջ ամեն կողմից անմաքրութիւններ են թափվում—ջուրը աւելի ևս վնասակար պէտք է դառնայ: Նշանակում է այնպիսով ջրից դիմելով է քաղաքի նշանաւոր մասը: Խօսք չը կայ որ մասնաժողովն անօրինութիւնը գովել է, բայց միանգամից չքաւոր ժողովրդի վրա ամենաանհրաժեշտ սկիտքի համար հարկ դնել՝ դա՛ն անելանելի վիճակ է: Մեր կարծիքով լաւ կը լինէր՝ եթէ ժողովրդին սովորեցնէին գտել ջուրը և ապա դործածել՝ քանի որ առ այժմ քաղաքում աղբիւր բերելու մասին ոչ ոք չէ մտածում»:

Կերակի օր, յունվարի 15-ին կայանալու է Կովկասեան Հայոց Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը: Բացի նախահաշիւ ընդհանուր ժողովը, Բացի նախահաշիւ ընդհանուր ժողովը, այդ ժողովում պէտք է ընտրվեն խորհրդի համար նոր անդամներ՝ հերթով դուրս գնացողների փոխարէն: Այս տարի հերթով դուրս գնացողներն են՝ պ. պ. Անտոնեան (խորհրդի նախագահ), Վարդապետեան, Եսայեան, Զէլիսկի, և Տէր-Լևոնդեան: Կանոնադրութեան գործութեամբ դուրս գնացող անդամները վերնաբերել կարող են լինել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՏԵՂԻՍԻՍԻՍԻՆԵՐ ԹԻՒՐԳԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Կ. Պօլսի հայոց լրագիրների վերջին համարներին «ազգային» լուրերի բաժնում, հետեւեալ տեղեկութիւնն ենք գտնում, որը Կ. Պօլսի լրագիրների հասկացողութեամբ, նշանաւոր, հետաքրքրական և առանձին նշանակութիւն ունեցող նորութիւններ է պարունակում: «Պատրիարքական ֆոնդատիւրը Հայքն ընկերակցութեամբ երէցեան Գեօրգ վարդապետի և Պատրիարքարանի գործակալարի երէկ Ֆէնէրի Պատրիարքարանի ֆոնդատիւրին կողմէ որ դանձր պատուատիւրէլ յետոյ Գիտնէսիոս Պատրիարքին ներկայացուց: Մեր ֆոնդատիւրը հայքն խորհի Պատրիարքի եղբայրական ողջոյն հաղորդել յետոյ յանուն Ն. Ամենապատուութեան շնորհաւորեց Գիտնէսիոս Պատրիարքն որ իւր շնորհակալութիւններն յայտնելով յանձնարարեց ֆոնդատիւրը հօր փոխադարձաբար իւր եղբայրական ողջոյն հաղորդել խորհի Պատրիարքին: Գիտնէսիոս ֆոնդատիւրին կողմէ յետոյ մեկնեցան և ըստ սովորութեան հանդիսաւոր կերպի Ֆէնէրի Մայր Նիկողոսի մօտ ուր աղօթեցին: «Փոխանորդ Հայքն անտի ուղղակի Բերա Հայ Հռոմէականաց Պատրիարքարանը գնաց և Ազարեան Գերապայաժառին ներկայանալով յանուն Պատրիարք Հօր շնորհաւորեցին յնախան տեղը: Անտի Օրմազդիւր անցան և Պուկարաց Էկղարեան Բանն երթալով նոյնպէս շնորհաւորական այցելութիւն տուին Պուկարաց Գեր. Էկղարեան: «Արեւելք» մէջ կարդում ենք հետեւալը. «Պատրիարք Հայքն յատուկ յանձնարարական դրով մը Խովսեանցի կտակի գործադիր մնայուն

յանձնաժողովոյն ղրկեց Նիկողոսի Արեւան Արարամ քահանայի աշխատատեղի «Պատուութիւն Նիկողոսի» անուն գիրքն որպէս զի Մարտիկեան մրցանակին համար մրցման քննութեան ենթարկուի: Ն. Ամենապատուութիւն նոյնպէս քաջալերական վեր մը ուղղեց Նիկողոսին»:

«Կրօնական Ժողով» իւր նախընթաց աւուր նստին մէջ, ըստ առաջարկութեան Պատրիարք Հօր, որոշած է որ այն եկեղեցականը որը կը հրաժարին գաւառական պաշտօններէ Պօլսոյ մէջ որ և է պատժօն չը վարեն:

Տիրանակերտից արտասահմանի հայոց լրագիրներին գրում են հետեւեալ քստմեղի դէպքի մասին: «Թաթար Գալիպազ Ամէտ անուն անձն ի Տիրանակերտ աղբիւրի մը մօտ սպիտոր կոտրելուն համար լացող հայ օրը 8—10 տարեկան տղու մը ստակ ու անուշեղէններ տալով և սպիտոր ալ նորոգել խոտանալով, խեղճ տղայն խաբէութեամբ կառնանցել և հոս կը բերէ. իւր տան դռմին մէջ 5—10 օրեր դադարի պահելէն յետոյ տղայն պատեհ առթել մ'օգտուելով դռմէն փախած և լալով աստ անդ փախաւած պահուն, դիպտածաւ կառւ. ապաքանին առջև դալով, մի քանի անձինք զայն հարցաւորեցնելով, խնդրոյն մասամբ իրազեկ լինելէ յետոյ, Ազգ. առաջնորդարան տարած են, ուր տղուն պատասխաններէն հայ-կաթօլիկ լինելն իմացուելով, կաթօլիկ ազգայնաց առաջնորդարան ղրկուեցաւ, ուրից խնդրել տեղոյս ընդ. դատախազին թագրելով մը տեղեկագրուելով յանցանքին պատժուլը պահանջուեցաւ. ըստ օրինի և ընդ. դատախազին անմիջապէս Տիրանակերտ հեռագրեց: Այդ յիշեալ առևանդին Տիրանակերտի մէջ բանտարկուելով դատի ենթարկուին և իւր յանցանքն խոտուլանած լինելն տեղոյս ընդ. դատախազին հասած հեռագրէ մը հասկցուած է: Խեղճ տղայն կաթօլիկ ազգայնաց առաջնորդարան կը գանուի այժմ»:

Ի նկատի ունենալով Կ. Պօլսի հայոց պատրիարքարանի խորհուրդ և գծած շինութիւնը, որը Եջմիածին վանքի շինութիւնից աւելի էլ «անպատուութիւն» կարող է բերել,—խօսելով Պօլսի ազգաւորների լեզուով—«ազգային արժանապատուութեան», վճարված է վերանորոգութեան ենթարկել այդ շինութիւնը: Այդ մասին Կ. Պօլսի լրագիրները հաղորդում են հետեւալը: «Ազգ. Ժողովը նկատողութեան առաւ պատրիարքարանի ի հիմանց վերանորոգութեան առթիւ Գաղաքական Ժողովոյ բ. ատենապետ Չայեան Խիսս Էֆենդին առաջարկին և Պատրիարք հօր յանձնեց որպէս զի ձեռնհաս անձինք բաղկացեալ յանձնաժողով մը կազմէ շինութեան յատկաձեռ պատրաստելու և այլ հարկ եղած կարգադրութիւններն ընելու համար»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՐԻՆԻ

«Հիւսիսային» հեռագրական գործակալութիւնը հեռագրում է մեզ Վիեննայից, որ յոժնվարի 8-ին աստրիական կայսրի պալատում կայացաւ ընտանեկան ճաշիկով ի պատիւ իշխան Ալեքսանդր Բատուրնէրգի:

Չանդիբալից գերմանական մի քանի լրագիրներ թղթակիցները գրում են, որ տեղացիները դէպի Գերմանիա ունեցած ատելութեան պատճառը այն խառնութիւններն են, որ գործ են դնում այնտեղ գերմանացիները:

Փարիզից հեռագրում են, որ միապետականները ամեն ջանք գործ են դնում գտնել Բուլանժէին ընտրելու համար Փարիզեան կոմը՝ յոյս չառնելով իր ընտրութեան վրա, ինքն էլ աշխատում է Բուլանժէին համար:

Փարիզում յայտնի Բոշֆօր այս օրերս մեծամարտ ունեցաւ Լիսապոսից հեռ. պատճառը վերջինի մի յօդուածն էր, որ տպագրվել է «Bataille» լրագրում: Երկու մենամարտողներ թեթև վերքեր ստացան: Փոքր էր մնացել, որ նոյնպիսի մենամարտ պատահէր Լօրի և Ֆլօկէի մէջ, մի վրաւարական յօդուածի պատճառով, որ Լօր տպագրել է մի լրագրում, և որով այն միտքն էր յայտնում իւր թէ Ֆլօկէ փողով էր ուղում աջողեցնել իր ընտրութիւնը:

Գերմանական թէյխատարում վերջին օրերում տաք միճաբանութիւն տեղի ունեցաւ իշխան Բիսմարկի և Ռիխտերի մէջ: Պատճառը գերմանական դադթական քաղաքականութիւնն էր: Խօսելով ճորտերի առևտրի մասին, իշխան Բիսմարկ արդարացնում էր իր քաղաքականութիւնը

նրանով, որ միանգամայն չէ կարելի վերջ տալ հազարաւոր տարիներէ ի վեր դրոշմին ունեցող ճորտերի առևտրին, և դրա հետ միասին այն միտքն էր յայտնուում, որ Ռիտտեր և իր կողմնակից մամուլը վնասակար են Գերմանիային: Այդ խօսքերը, ի հարկէ, առանձին տպաւորութիւն չը թողեցին, որովհետեւ իշխան Բիսմարկ վաղուց է որ կրկնում է այդ մի և նոյն միտքը իր հակառակորդների վերաբերմամբ: Բիսմարկի կարծիքով «Վնասակար է հայրենիքին այն մարդը, որ համարում չէ Բիսմարկի հետ»:

— Հռոմից գրում են, որ ժողովրդի մէջ օրից օր սաստկանում է դժգոհութիւնը կառավարութեան դէմ, շատացող հարկերի պատճառով:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Շէկայիլի գրուածները ներկայումս Լոնդոնում թարգմանվում են չինարէն լեզուով:

Ներկայ թւականի օգոստոս ամսին Գարիգում գումարվելու է աշխարհագրական կոնգրես:

Բերլինի համալսարանում ներկայումս ուսանում է մի ուսանող, որը ամենատաալին մաթեմատիկոսն է ամբողջ համալսարանում, և... աչքերով կտրէ է Նա այդքանապակաւ և երկրաչափական ամենաբարձր խնդիրները մեծում է մշտնջող և շատ շուտով: Դրա հետ միասին չնորհալի կտրէ ուսանողը լաւ նուազածու է է:

Ասում են, որ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի հոգաբարձուներէ ոմանը շատ են մտածում այն մասին, թէ ինչպէս անեն որ այդ դպրոցի տեսուչները շուտ շուտ չը փոփոխվեն, քանի որ այդ անփոփոխալի փոփոխութիւնները շատ վնասում են դպրոցին: Առաջարկում ենք այդ դպրոցի հոգաբարձութեանը տեսչի պաշտօնին համար հրահրել Ներսիսեան այժմեան ժամանակը վաղուց անցած քաղաքագլուխ Գեղամովին, այդ պարտքը այն յատկութիւնն ունի,— որ մի պաշտօնի մէջ մտնելուց յետոյ, այլ ևս դուրս չի գալիս այդ պաշտօնից... Գուցէ Գեղամով Ներսիսեան դպրոցին շատ օգտակար չի լինի, բայց դեռ նրա Թիֆլիս գալով Ներսիսեան վերջապէս կադատվի նրանից...

«Gegenwart» հրատարակութեան մէջ պրոֆեսոր Մօրից Կարիէր աշխատում է ապացուցանել որ Գեոթէ է իր Ֆրանսոսը «գողացել է» Լէստինից...

Շուտով լոյս կը տեսնի Վիլհելմ կայսրի ճանապարհորդութեան մանրամասն նկարագրութիւնը:

ՄՇԱԿԻ ՀՆՈԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 յունվարի: «С. Пет. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ Օրլովի նահանգապետը տեղեկացրել է ավստրականների պարագլխին, որ էլէկտորի բացման առիթով, Ելեցի դեմադրի հաւատարմութիւն արտայայտող հեռագրի վերաբերութեամբ ֆինանսների մինիստրի կողմից թաղաւոր Կայսրին արած դեկլարացիան ժամանակ, Նորին Մեծութիւնը յոյս յայտնեց, որ Ելեցի դեմադրի ձեռնարկութիւնը շատ կը նպաստի երկրադորութեան և առևտրի դարգացման Ռուսաստանի կենտրոնական շրջանում: «Гражданин» լրագրին Բոլդարիայից, շատ հաստատ աղբիւրից հաղորդում են, որ այնտեղ եւանդոն կերպով կաթօլիկ պրոպագանդա է լինում: Նորբում երկու աքսորվածներ, լսելով ազատութեան նորոգման մասին, վերադարձան հայրենիք, բայց նրանց իսկոյն բանտարկեցին և սկսեցին չարչարել: Կաթօլիկ հոգևորականները, սղարմածութեան պատրուակով այցելելով նրանց, ասել են, որ եթէ նրանք կընդունեն կաթօլիկութիւնը, այն ժամանակ նրանց տանջանքները միանգամայն կը վերջանան: Մէկը ընդունել է կաթօլիկութիւն, միւսը չը համոզվեց և նրան կիսամեռ տարան անյայտ տեղ: Ամբողջ Բոլդարիան լի է եղբուհներով:

ՓԱՐԻԶ, 10 յունվարի: Երէկ «Avenue Duguesne»-ի մէջ կայացած ընտրողական ժողովում կատարի կռիւ տեղի ունեցաւ բուլանժեանների և սոցիալիստների մէջ, որի ժամանակ 29 մարդ վիրաւորվեցան:

ՆԵԱՊՈԼ, 10 յունվարի: Վեղով հրաբուխից բարձրանում է սաստիկ ծուխ. հարաւ-արեւելեան լանջով հոսում է լավա. լավում է ստորերկրայ թնդում:

ՓԱՐԻԶ, 10 յունվարի: Պատգամաւորների ժողովը 369 ձայների առաւելութեամբ ընդգէմ 169-ի հաստատեց վիսուորական նոր օրինակը: Վիճարանութիւնների ժամանակ վիսուորական մինիստրը, ընդդիմախօսելով աշխուղմաններին, որոնք այն կարծիքի են, թէ օրէնքը նոր բնու է երկրի համար, ասեց, որ այդ օրէնքի հաստատելը անհրաժեշտ է երկրի պաշտպանութեան համար, և որ Ֆրանսիան ինքնապաշտպանութեան համար պէտք է միջոց ունենայ դուրս բերելու 3 միլիոն զօրք:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 յունվարի: Երէկ փակվեց ուսաց բժշկների ժողովը: Վերջապահութեան մէջ նախագահը բացատրեց ժողովի նշանակութիւնը ասելով, որ ժողովում չիվում են այնպիսի մարդիկ, որոնք միատեսակ չափ և նպատակ ունեն և մասնացրեց արաւ եղած տարածություններին: Երէկ փակվեց Գեղամովի վրա, որոնք համարեա անփոխալի են այդպիսի բաղձաբիւ ժողովներում, բայց հորիզոնը կը պարզվի, վերջացրեց նախագահը, և ճշարտութիւնը կը յաղթանակէ:

ԱՍՏԻՐԱԿ, 11 յունվարի: Չմեղը ճշարտեց որ խիստ է, բայց աղղաքնակութիւնը սարսափելի չէ տանջվում, այլ միայն անպարտութիւններ է կրում. հիւանդութիւններ չը կան. կենդանիները և ուղտերը չեն սատկում առանց կերակրի: Բրօքսելս. պահեստում շաքարը ծախվում է պուղը 7 րուբլով. կերօսինը պահեստներում ծախվում է 1 ր. 10 կոպէկով, իսկ փոքր քանակութեամբ ծախվում է պուղը 1 ր. 60 կոպէկով: Այն լուրը, որ իբր թէ անապատներում ընկած են այծերի սառած հոտեր՝ հնարված է:

ՎԻԵՆԱ, 11 յունվարի: Պրինց Ալեքսանդր Բատտենբերգ ուղևորվեց Վէնէցիա, այնտեղ երկար ժամանակով ապրելու նպատակով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ ԶՈՒՆՈՒՄԻ 10-ԻՆ

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծե.	93 ր. 90 >
Համբուրգի վրա 100 մարկ —	46 > 10 >
Փարիզի վրա 100 ֆրանկ —	37 > — >
Սպիտ — արծե —	7 > 55 >
Մաքսային կուպոններ —	151 > 50 >
Արծաթ —	1 > 14 >
Բորսային դիվիդենդներ —	7 և 73/80 >
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի 98 > 50 >	
— — — — — 2-րդ — 97 > 62 >	
— — — — — 3-րդ — 97 > 62 >	
— — — — — 4-րդ — 97 > 62 >	
— — — — — 5-րդ — 97 > 62 >	
Ոսկեայ փոխառութիւն.	132 > — >
Նոր 4% փոխառութիւն.	82 > — >
Արեւելեան 5% փոխառութիւն 1-ին շրջ. 97 > 50 >	
— — — — — 2-րդ — 97 > 50 >	
— — — — — 3-րդ — 97 > 12 >	
Երբեք 5% առաջին փոխառութիւն.	265 > — >
— — — — — երկրորդ — 245 > — >	
51/2% ռենտա	102 > — >
Ոսկեայ ռենտա	169 > — >
Եթեբորդ կոնսոլիդաց. փոխառութիւն.	147 > 50 >
Նոր երկաթուղային ռենտա	97 > 87 >
5% զրաւական թղթեր կալուած.	— > — >
— — — — — փոխ. կրկ. ընկ. մեռ.	148 > 50 >
— — — — — թղթադ.	91 > 25 >
Գրաւ. թղ. Ալեք. բանկի	98 > — >
51/2% զրաւական թղթեր Երբեքի կալուած բանկի	97 > 50 >
6% զրաւ. թղ. Երբեքի կալ. բան.	100 > 50 >
— — — — — Պոլտավայի — 100 > 50 >	
— — — — — Պետ. Զուրկի — 100 > — >	
— — — — — Կիւպի — 101 > — >	
— — — — — Մոսկվայի — 101 > 25 >	
— — — — — Բեսարաբ. Զուրկ. — 99 > 75 >	
— — — — — Նիւ. Սամար. — 100 > 25 >	
— — — — — Վիլնայի — 99 > 25 >	
— — — — — Թիֆլիսի — 72 և — 99 > 97 >	
— — — — — Գոթայի — 18 և — 97 > — >	

Վօյսկո-Կամուկի բանկի ակցիաները 678 > — >
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ. 235 > — >
Բրեյնի-Բոլոգոյի ընկ. 86 > — >
Ս. Պետերբուրգի քաղաքային օրի-գացիաներ. 93 > — >
Մոսկվայի քաղաք. օրիգացիաներ. 91 > 62 >
Օղէսայի — 93 > 25 >
Թիֆլիսի քաղաք. կրկ. ընկ. օր. 82 > — >
Ս. Պետերբուրգի բորսայի արամադրութիւնը աշխոյժ է:

ԻՄՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ՄՕՍԿՎԱ. Յ. Բ. Ուղարկեցինք ձեզ Գրիգոր Արծրունու բրոշուրը «Экон. Пол. Тур. Арм.», որը գուր պահանջեցիք:

ԳԵՅԳՅԱՅ. Գ. Մ. Յանձնեցինք 3 րուբլին «Մուրճի» խմբագրութեան:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԴՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Առևտրական կուրի թատրոնական դահլիճում (նախկին կրօտօյ) հինգշաբթի, յունվարի 12-ին 1889 թ., հայ դերասանական խումբը կը ներկայացնէ:

ՅՕԳՈՒՏ ՏԱՃԱՍՏԱՆՅԻ ԿՈՅՐ ՈՒՍՈՒՅԻՉ Պ. ԱԹԷԱՆԻ

«Վայ իմ կորած 50 ոսկի» վոդևիլը. «Ալէյէ Դարիին» պատկերը և «Էս էլ քի մոցելութիւն» վոդևիլը: Սկիզբն է 8 ժամին: Տեղերի գինը սովորականն է: Ցամակները վաղօրօք կարելի է ստանալ պ. Բոզարճեանցի ծխախոտի խանութում:

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵՅԻ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՕՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ատենի մէջ նշանակված է աճուրդ սոյն յունվարի 20-ին, առանց կրկնաձուրդի, կապալով տարւո համար Էժմիածնապատկան տունը, որ գտնվում է Երևանեան հրապարակի վրա:

Հոգևոր իշխանութեան թղթաւթեամբ Ս. ֆիլոսոֆի «ՋՐՈՅՆԵՐ ԲՆԱԿԱՆ ՊԱՏ-ՄՈՒԹԻՒՆՆԵՐ» անունով գիրքը ընդունված է հայոց ուսումնարաններում իբրեւ բնական պատմութեան դասագիրք: Գինն է 40 կօպ. Պէտք է դիմել. Новобаязетъ, Степану Ба-ТИՅԷ.

Կիրակի, 15-ին սոյն յունվարի, առաւօտեան ժամի 11-ին, Թիֆլիսի քաղաքային խորհրդի դահլիճում տեղի կունենայ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐ: Պարագլուխը, ընկերութեան խորհրդի, Գորու, Շուշու և Երևանի տեղական վարչութիւնների սոյն 1889-ի նախահաշիւները և պաշտօնավար անձինքների ընտրութիւն:

ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕНОЕ
Россійское Общество Застрахованія капиталовъ и доходовъ
УТВЕРЖД. ВЪ 1835 ГОДУ
ԲԱՐՁՐԱԳՈՅ ՀԱՍՏԱՅԱԾ
Ռուսաց ընկերութիւն կապիտալների և եկամուտների ապահովութեան
հիմնված 1835 թւին

Ամենայն և միակ ուսաց ընկերութիւն, որը բացառապէս պարագլու է կեանքի (կապիտալների և եկամուտների) ապահովութեան գործով, փոխադարձութեան սկզբունքների վրա:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 8,000,000 ՐՈՒԲԼԻ

- Կապիտալների ապահովութիւնը ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ համար, ապահովաւորող մասունքն ղէպըմա:
- Կապիտալների ապահովութիւնը ԵՄԵՐԻՅԻՆԸ և Երեւանների համար ԲԱՅԻՆԻՐԸ ապահովացնելու համար:
- Եկամուտների և ցմաճ նշանակվող ԹՈՇԱԿՆԵՐԻ ապահովութիւնը:
Տարիքները և մանրամասն տեղեկութիւնները ուղարկվում են անվարձ ԳԼԽԱՌՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ կողմից, որը գտնվում է Թիֆլիսում, Վելիամինովսկայա փողոց, տուն № 24.
Գլխաւոր Ագէնտ և Տեսուչ Կովկասեան երկրի համար՝ Ն. Ն. ԳՐՈՒՋԵՆԵՐԻ:

ՊԱՀԱՆՁՎՈՒՄ ԵՆ ԱԳԷՆՏՆԵՐ ԵՒ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ
Թիֆլիսի և Կովկասեան ուրիշ քաղաքների համար: 29—32 (Հ)

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱՄԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
«ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԱՅԻ»
Գ. ՏԱՐԻ, 1889

Բաժանորդութեան գինն է՝ ճամբու ծախքով տարեկան 8 ֆր. — 4 րբ. — 4 ֆր... Խմբագրութեան հասցեն է՝ Rédaction de la Revue «Hantess», Vienne (Autriche), VII. Mechitharistengasse 4, և կամ՝ Вѣ Вѣну (Австрія), редакция «Андесть», Wien, VII. Mechitharistengasse 4.
Խմբագրութիւնն որոշած է Հանդիսի Գ. Տարույն շրջանէն տասն օրինակ նուիրել ազգային կարօտ վարժարանաց՝ վիճակահանութեամբ: Ան վարժարանը որ կը բաղձան մասնակցել վիճակահանութեան, պէտք են վարժարանին վարչութեան կնքով փակեցնել խնդրագիր մատուցանել խմբագրութեան: Խնդրագիրը փոխվում հասնելու են խմբագրութեան ձեռքն 1889 տարւոյ Հանդիսի Յունուար 1 թւին ուղղակի խմբագրութիւնն կրնայ ընդունուի ԶՐԻ ուղարկելով 5 սանդղ. — 10 ֆր. — 2 կօպ. նամակադրոյմ:

Խմբագրութիւն «Հանդիսի»

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

ԱՐԻՍՏՈՐ ՈՄ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՅԻ

ՌՈՒՍԵՐԵՆԻՑ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԴԻՐԻ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

Գինն է 3 րուբլի, ճանապարհի ծախսը գնողի վրա է:

Միանուագ քսանից ասելի գնողին զիջումն կը լինի:

Վաճառվում է ԲԱՑԱՌԱՊԷՍ Խիդիկէլի և ընկ. գրավաճառանոցում, Թիֆլիս, Գոյովինսկի Պրոսպէկտ, առաջին Գիմնազիայի հանդէպ:

28—40

ОТКРЫТА ПОДПИСКА НА ГРУЗИНСКУЮ ЕЖЕНЕДЕЛЬНУЮ ИЛЛЮСТРИРОВАННУЮ ГАЗЕТУ

„ТЕАТРЪ“

Н.А. 1889 г.

Газета будетъ издаваться при болѣе благопріятныхъ условіяхъ.

Подписная цѣна газеты съ доставкой и пересылкой: на годъ 5 р. на полгода 3 р. Одѣльный номеръ 15 к. премія газеты «ТЕАТРЪ». На 1888 г., годовымъ подписчикамъ грузинскій Стенной Календарь. изд. Г. Чарквіани. На 1889 г., Царица Тамара, (большая олеографическая картина). Адресъ для иногороднихъ: Тифлисъ, редакция газеты «ТЕАТРЪ»

Редакторъ-издатель А. Неберидзе.

2—3